

Հայերէն ինտերոդ պահը

Հինգշաբթի 30 Ապրիլ 2020

Ա. Անցեալ կատար – Αόριστος – κοινών αλλά ανώμαλων ρημάτων της πρώτης ομάδας σε **-ել.**

Όπως σε πολλές γλώσσες της ινδοευρωπαϊκής οικογένειας τα πιο κοινά ρήματα είναι ανώμαλα. Οι ανωμαλίες όμως εντάσσονται σε τύπους. Εμφανίζονται προ παντός στον αόριστο και στην προστακτική (κατάφαση).

Σας παρουσιάζω διάφορα ρήματα, τα πιο κοινά πρέπει να τα ξέρετε απ' έξω.

բերել → ես բերի, դուն բերիր, ան բերաւ, մենք բերինք, դուք բերիք, անոնք բերին
φέρω

դնել → ես դրի, դուն դրիր, ան դրաւ, մենք դրինք, դուք դրիք, անոնք դրին
βάζω

գարնել → ես գարկի, դուն գարկիր, ան գարկաւ, մենք գարկինք, դուք գարկիք, անոնք գարկին
χτυπάω

ընել → ես ըրի, դուն ըրիր, ան ըրաւ, մենք ըրինք, դուք ըրիք, անոնք ըրին
κάνω

ըսել → ես ըսի, դուն ըսիր, ան ըսաւ, մենք ըսինք, դուք ըսիք, անոնք ըսին
λέω

α'. -նել → Το **-ն-** εξαφανίζεται, δεν αλλάζει η ρηματική ρίζα και οι καταλήξεις είναι οι εξής:

-այ
-ար
-աւ
-անք
-աք
-ան

գտնել → ես գտայ, դուն գտար, ան գտաւ, մենք գտանք, դուք գտաք, անոնք գտան
βρίσκω

մտնել → ես մտայ, դուն մտար, ան մտաւ, մենք մտանք, դուք մտաք, անոնք մտան
μπαίνω

իջնել → ես իջայ, դուն իջար, ան իջաւ, մենք իջանք, դուք իջաք, անոնք իջան
κατεβαίνω

ելլնել / ելլել → ես ելլայ, դուն ելլար, ան ելլաւ, մենք ելլանք, դուք ելլաք, անոնք ելլան
βγαίνω

տեսնել → ես տեսայ, դուն տեսար, ան տեսաւ, մենք տեսանք, դուք տեսաք, անոնք տեսան
βλέπω

β'. -նել → Το **-ն-** εξαφανίζεται, δεν αλλάζει η ρηματική ρίζα και οι καταλήξεις είναι οι εξής:

-ի
-իր
-աւ
-ինք

-իք
-ին

անել → ես առ**ի**, դու առ**իր**, ան առ**աւ**, մենք առ**ինք**, դուք առ**իք**,
անոնք առ**ին**
παίρνω

խածնել → ես խած**ի**, դու խած**իր**, ան խած**աւ**, մենք խած**ինք**,
դուք խած**իք**, անոնք խած**ին**
δαγκάνω

թքնել → ես թք**ի**, դու թք**իր**, ան թք**աւ**, մենք թք**ինք**, դուք թք**իք**,
անոնք թք**ին**
φτύνω

Գ՝. -նել (Μεταβατικά ρήματα / **Factitive** and transitive verbs) → **Το -ն-**
εξαφανίζεται, προστίθεται το -ուց- στη ρηματική ρίζα

και οι καταλήξεις είναι οι εξής:

-ուց**-ի**
-ուց**-իր**
-ուց
-ուց**-ինք**
-ուց**-իք**
-ուց**-ին**

ցուցնել / ցցնել → ես ցուց**ուցի** / ցց**ուի**

չորցնել → դու չորց**ուցիր**

հիւանդացնել → ան հիւանդաց**ուց**

լաւացնել → մենք լաւաց**ուցինք**

խոնաւցնել → դուք խոնաւց**ուցիք**

խենթացնել → անոնք խենթաց**ուցին**

***դարձնել** → **ես դարձուցի**

հարցնել → **դուն հարցուցիր**

Բ.' Άσκηση – Վարժութիւն

Ա. Արմէնը ինձի համար իր նոր գիրքին օրինակ մը _____ . (*գտնել*)

Բ. Ես իրեն _____ (*հարցնել*), ինչո՞ւ գիրք մը հրատարակչատունէն գիրք մը _____ : (*տանել*)

Գ. Չինք փողոցին մէջ _____ : (*տեսնել*)

Դ. Բայց ինք շէնքի մը մէջ _____ (*մտնել*), եւ գինք չ _____ մեր մեծ խնդրոն մասին: (*խօսցնել*)

Ե. Ոչ մէկը ոմբակոծուած շէնքէն ողջ _____ (*ելլել*): Մենք սոսկալի _____ (*յուզուիլ*):

Զ. Հիւանդ մարդը հիւանդապահուիին _____ (*խածել*): Մարդը կինն ալ _____ (*հիւանդացնել*): Ան երէկ չորս անգամ արիւն _____ (*թքնել*):

Բառամթերք՝

Օրինակ

Հրատարակչատուն ~ εκδοτικός οίκος

Հրատարակել

Հրատարակիչ – Պոլսոյ մէջ Արաս եւ Պորզամար Հրատարակչատուններուն հետ երբեմն կը գործակցիմ: Ասով շատ հպարտ եմ:

Փողոց ~ δρόμος / όδος, *Երեւանի Արմէանի փողոցը ամէնէն գեղեցիկներէն մէկն է:*

Պողոսայ ~ λεωφόρος, *Երեւանին մէջ Մաշտոցի պողոսային վրայ պիտի ուզէի յարկարածին մը ունենայ:*

Ճամբայ ~ δρόμος, *Դէպի Երկիրը ճամբան երկար է: Հաւանաբար շուտ պիտի չհասնինք:*

Բարի՛ ճանապարհ: - καλο ταξίδι

Շէնք ~ κτίριο

Շինել ~ χτίζω

Շինարարութիւն

Փայտաշէն - Քարաշէն

Ժամանակին Պոլիս քարաշէն տուներով լեկեցուն էր: Հիմա ալ չկան: Փրկուցին:

Խնդիր > (γεν.) խնդրոյ ~ πρόβλημα, ζήτημα

խնդրոյ առարկան/անձը

Սոսկում ~ τρόμος, սոսկալի

Յուզել ~ συγκινώ, յուզիչ, յուզուիլ

Ռումք ~ βόμβα , ոմբակոծել, ոմբակոծուիլ

Պերլինի մէջ հին ոմբակոծուած շէնքի մը մէջ սպրած եմ: Հիմա փրկեցին եւ իր տեղը նոսրոր աղբի շէնք մը շինեցին:

Հիւանդ ~ άρρωστος , հիւանդապահ, հիւանդապահուիի, հիւանդ մը պահել
Հիւանդանալ, հիւանդացնել

Մէկը օղանաւի մը մէջ կը հիւանդանայ: Սոսկալի հիւանդ կը դառնայ:

Հիւանդը առողջ սիրելիները կը հիւանդացնէ, որովհետեւ իր հիւանդութիւնը փոխանիկ է եւ մարդը տեղեակ չէ:

Հիւանդ ≠ առողջ

Արիւն ~ αίμα

Գ.' Գրութիւն – Կείμεն *Ի՞նչ ըրիր:*

Աննան յոգնեցուցիչ օր մը **ունեցաւ:**

Տունը **վերդարծաւ:**

Ինքնաշարժին մէջ **մտաւ** եւ կամաց-կամաց **քշեց:**

Քաղաքը լեփլեցուն էր: Երթելէկը խիտ էր:

Վերջապէս տունը **հասաւ:** Իր ամուսինը արդէն հասած էր:

- Բարի իրիկուն, հոգի՛ս:
- Բարի իրիկուն, ժիրայր:
- Ինչպէ՞ս **անցաւ** օրդ:
- Լաւ **անցաւ:** Շատ **աշխատեցայ:** Կեսօրին ընկերութեան քովը **կերայ:**
Յետոյ նորէն ներս **մտայ** որովետեւ գործ մը կ' ուզէի վերջացնել:
- Ի՞նչ **ըրիր:**
- Շուտ կերայ: Գործս **վերջացուցի** եւ քաղաքը **իջայ:**
- Ի՞նչ **ըրիր** քաղաքին մէջ: Վաղը միասին պիտի չերթա՞նք:

- Վաղն ալ կ' երթանք: Բայց այսօր նոր բան մը **տեսայ**: Կարծեմ նոր կանաչ հագուստ մը **գտայ**:
- Ի՞նչ **գտար**:
- Նոր կանաչ հագուստ մը: Քեզի **ըսի** որ Մայիս 5ին Արմինէին տղան կ' ամուսնանայ: Նոր հագուստ մը պէտք ունիմ: Այսօր յարմար բան մը **տեսայ**:
- Ո՞ր **տեսար**:
- Խանուբի մը մէջ, անշո՛ւշտ:
- Ո՞ր:
- Հիմա **ըսի**: Ժիրայր մտիկ չե՛ս ըներ:
- Մտիկ **ըրի**, ո՞ր խանուբին մէջ այսինքն:
- Երմու փողոցին վրայ, «Մարքս եւ Սփէնսեր»-ի մօտը:
- Բան մը **անհ՞ր**:
- Ո՛չ, ժիրայր՝ միայն **նայեցայ**:
- Ինչո՞ւ **չանհր**:
- Որովհետեւ հետդ կ' ուզեմ երթալ:
- Ես ե՞րբ «Մարքս եւ Սփէնսեր»-ի քով **մտայ** վերջին անգամ ըլլալով:
- Լաւ, առիթ կ' ըլլայ: Դուն ալ նոր շապիկ եւ նոր տաբատ պէտք է գնես: Ունեցածներդ հին եւ բոլորովին «տեմօտե» **եղան**:
- Ի՞նչ կ' ըսես: **Խենթացա՞ր**: Քանի մը տարի առաջ նոփնոր հանդիսական հագուստ մը Եօլու փողոցին վրայ առի:
- Աս է ըսածս: Հին է հիմա: Մարմինդ ալ **փոխուեցաւ**:
- Լաւ, Աննա՛ ուզածիդ պէս պիտի ըլլայ

Ժիրայրը կ'ես խենթացուցած նստասենեակ **գնաց** եւ **նստաւ**: Տրամադրութիւն ակրուած էր: Աննային հետ խօսիլ անիմաստ էր: Ան միշտ իրաւունք կ' ունենար:

Քառամթերք՝

Յոգնիլ, յոգնեցնել, յոգնութիւն, յոգնեցուցիչ

հնքնաշարժ

Քշել, քշող

Ուտել – *կերայ*

Կե'ր – կերէ'ք / Մի' ուտեր – Մի' ուտէք

Յետոյ // վերջ

Երթելէկ

Քաղաք – գիւղ – գիւղաքաղաք

Գիւղացի

Քաղաքակրթութիւն

Քաղաքավար

Ամուսնանալ, ամուսնութիւն, **ամուսին**

Առիթ ~ ευκαιρία, առիթի ~ με την ευκαιρία

Ունեցածներդ < ունենալ – ունեցայ – ունեցած եմ

Ունեցած, ունեցածներ, ունեցածներդ, ունեցածներդ

Բոլորովին ~ εντελώς, πλήρως

Ըսածս < ըսել – ըսի – ըսած եմ

Ըսածս, ըսածիս համաձայն

Ուզածիդ պես < ուզել – ուզեցի – ուզած եմ


Ուզածս աս է որ ուսանողները հայերը քիչ մը աւելի լաւ ճանչան:

Բայց անոնց ուզածին համաձայն պիտի ըլլայ:

Մարմին, մարմանային // մարմնական, մարմնակազմութիւն

Մարմանալ, մարմնացնել

Գ.' Λογοτεχνία και «φεμινισμός» - Գրականութիւն եւ կնկաց ազատագրութիւնը



Սրբուհի Տիւար¹

Բառամթերք`

Տէր – տանտէր

Տիրուհի – տանտիրուհի

Տէր Աստուած

Տիրանալ – Փրանսային մէջ չորս լեզու կատարեալ տիրանալ
հազուադիւս բան է: Յունաստանին մէջն ալ: Օսմանեան
կայսերութեան ատեն շատեր բազմալեզու էին:

Գործ – (γεν. ενικού) գործի – (γεν. πληθυντικού) գործոց

Բառը // **բախտ** – Հայու բա'խտ: - բախտաւոր ≠ անբախտ, դժբախտ

Անձ – նուէր – **անձնուէր** – անձնուիրութիւն

Անձնական – անձաւորել – **անձնաւորութուն**

Ձայն ~ փօնի – *Տեղին ձայնը*² – ձայնաւոր

Բարձր ձայնով խօսիլ

Ձայնասփիւռ – Ձայնասփիւռի կայանի մը մտիկ ընել

Հեռաձայն – մէկու մը հեռաձայնել

Արձագանք ~ απήχηση

¹ Victoria Rowe, *A History of Armenian Women's Writing, 1880-1922*,

<https://www.armenianinstitute.org.uk/shop/a-history-of-armenian-womens-writing-1880-1922>

² **ԲԱՇԱԼԵՎՆ ԼԵԻՆ (1868-1943)** [Արեւմտահայ եւ սփիւռքի](#)

[գրականութիւն](#) <http://digilib.aua.am/book/536/559/20600/%D5%91%D5%A5%D5%B2%D5%AB%D5%B6%20%D5%B1%D5%A1%D5%B5%D5%B6%D5%A8>

Ո՞վ էր Սրբուհի Միսաք:

Սրբուհի Տիսաք (Վահանեան), (1840 - 1901), հայ գրող, բանաստեղծ:

Աղբիւր՝

https://hyw.wikipedia.org/wiki/%D5%8D%D6%80%D5%A2%D5%B8%D6%82%D5%B0%D5%AB_%D5%8F%D5%AB%D6%82%D5%BD%D5%A1%D5%A2

Ծնած է [Պոլիս](#), Կաթողիկէ բարեկեցիկ Վահանեան ընտանիքին մէջ: Ստացած է օտար կրթութիւն, բայց «Չարթօնք»ի մթնոլորտը, քիչ-քիչ տարածուած՝ կաթողիկէ համայնքին վրայ, զինք մղած են մօտենալու մայրենի լեզուին եւ մշակոյթին:

Ուսուցիչ կ'ունենայ գրագէտ եւ ազգային գործիչ [Մկրտիչ Պէշկեթաշեանը](#): Աւելի ուշ, [պոյսաբնակ Ֆրանսացի](#) երաժշտագէտ Փ. Տիսաքի հետ ամուսնանալէ եւ նուիրեալ մայր ըլլալէ ետք եւս, տաղանդաւոր այս կինը, կը շարունակէ գրական-մշակութային իր դերը հայ իրականաթեան մէջ. յատկապէս, կը հրատարակէ յաջորդական վէպեր, որոնց գլխաւոր հերոսները կ'ենք են, եւ որոնց տիրող գաղափարները կը վերաբերին կնոջ ազատագրման եւ իրաւահաւասարութեան՝ արական սեռին հետ:

Տիսաքի գործերը առիթ եղած են բանավեճի. որոշ գրագէտներ պաշտպանած են իր դրոյթները, ուրիշներ՝ վարձած են այս կամ այն ձեւով ու չափով գանոնք հերքել: Յամենայն դէպս, Ս. Տիսաք որոշ հմայք եւ ազդեցութիւն գործած է իրեն անմիջապէս հետեւող սերունդին վրայ մանաւանդ կ'ին գրողներուն: Ան ունեցած է դեռ հրապարակագրական գործունէութիւն: Գրած է նաեւ [բանաստեղծութիւններ](#), որոնցմէ՝ [Ս. Պէշկեթաշեանի](#) յիշատակին նուիրուած քերթուածը (Սրբուհիի եւ Պէշկեթաշեանի կապին մասին) (■* Գ. գիրք, էջ 239-էն):

Երկեր

- Մատյա, [Կ. Պոլիս](#), 1883, 252 էջ:
- Սիրանոյշ, Կ. Պոլիս, 1884, 408 էջ:
- Արաքսիա կամ վարժուհին, Կ. Պոլիս, 1887, 321 էջ:
- Արաքսիա կամ վարժուհին, Կ. Պոլիս, 1925, 288 էջ:
- Սիրանոյշ, Կ. Պոլիս, 1925, 297 էջ:
- Երկեր, Երեւան, 1959, 654 էջ:
- Երկեր, Երեւան, 1981, 550 էջ:
- Սիրանոյշ, Երեւան, 2011, 224 էջ:

Աղբիւրներ

- «Իմաստուերներ», [Հրանդ Ասատուր](#), 1921, էջ 152-168:
1. data.bnf.fr: open data platform — 2011.

- Faceted Application of Subject Terminology

Գ. Επανάληψη: πτώσεις των ουσιαστικών σε **-ութիւն**

-ութիւն	-ութիւններ
-ութեան	-ութեանց / -ութիւններուն
-ութեամբ	-ութիւններով
-ութենէն	-ութիւններէն

Մենք Աթէնքի համալսարանին **թրքագիտութեան** բաժինին ուսանող ենք: Մենք **խանդավարութեամբ** հայերէնն ալ կը սորվինք: **Հայագիտութեան հետազօտութեանց** հիմակուայ վիճակը տակաւին չենք ճանչնար: **Համբերութեամբ** նոր լեզուին եւ մշակոյթին պէտք է մօտենանք: **Դժուարութենէն** չենք վախնար: Օսմաներէնէն աւելի դժուար չի կրնար ըլլալ:

Հայերէն եւ յունարէն **բանաստեղծութեանց** միջեւ 19րդ դարուն ընթացքին թերեւս **նմանողութիւններ** կային, իսկ հիմա՝ մէկը միւսին համար գոյութիւն չ' ունի:

Բազմալեզութիւն հետաքրքրական երեւոյթ մըն է: Լեզուներուն միջեւ հաւասարութիւն չկայ: Իր բոլոր լեզուներուն պարագային խօսողին **տիրապետութիւնը** նոյնպէս կատարեալ չի կրնար ըլլալ: Երեւոյթին **բարդութիւնը** մեծ է, որովհետեւ ասոր վրայ ընտանեկան, անձնական հոգեբանական, ընկերային, տնտեսական, տեղական եւ միջազգային ազդակներ շատ են:

Ե. Գրութիւն – Հեղինակ՝ Վաչէ Տէմիրճեան (Դիմատետրին վրայ -)

Շանէլ թիւ 5

երբ գարնան օրերը գան
պարտեզները ծաղկանան

կատուս տունը մնալու փափաք չունի
պատուհանէն դուրս կը նետուի

ամբողջ օրը կը ցատկոտէ
թիթեռնիկ բռնել կ'ուզէ



սկիզբները շատ մտահոգ
կը սպասէի մինչեւ առաւօտ

ուրիշին տունը կ'երթայ քէֆի-մէֆի
կ'ուտէ կը խմէ կը պառկի

կը շոյուի-մոյուի
շփացած-մփացած

աներես-մաներես
յաջորդ օրը կը մտնէ ներս

Շանէլին հոտէն քիթս փրթաւ մէկէն
դրացի Ժան-Մարիին քովը պառկեր էր
նորէն

Իսպէ
Սէն-Մօրիս / Saint-Maurice
19 Ապրիլ 2020

երբ որ գլուխ չ'ելլեր թիթեռնիկէն
կը սկսի վազվառել մեղուի ետեւէն

մեղուն պզգալով կը փախչի
կարգը կու գայ սեւ ճանճին

ես ալ նստած լելակի ծառին շուքին տակ
կը հիստեմ բառերս երկար-բարակ

տաք կիրակի մը սահեցաւ գնաց
գարեջուր ալ բաւարար չի մնաց

մութը կոխեց արդէն
կատուն մէջտեղ չկայ նորէն

պոռայ կանչէ կատո՛ւ եկու՛ր տուն
փողոցային շուն դարձեր է իմ կատուն



Բառապաշար՝

գարուն < (γεν.) գարնան

ամառ < (γεν.) ամառուան

աշուն < (γεν.) աշնան

ձմեռ < (γεν.) ձմեռուան



ծաղիկ

ծաղկանայ

ծաղկել

փափաք ~ επιθυμία, փափաքի

Իբր արձակուրդ ի՞նչ կը փափաքիր: Երբէն Հրապարտան երթալ կա՛նք Կրաստան ճանչնալ:



պատուհան

դուրս ելլել ≠ **ներս մտնել**

βγαίνω έξω ≠ μπαίνω μέσα

նետել ~ ρίχνω, πετάω, նետուիլ

ձեռք նետել



թիթեռնիկ

մեղու



ճանճ



միջառ



լիլակ – եղբուկանի

տակ (μετάθεση + γεν.) κάτω από ≠ **վրայ** (μετάθεση + γεν.) πάνω σε



շուք ~ σκιά

հիւսել ~ πλέκω / υφαίνω

երկար ~ μακρός ≠ **կարճ** ~ βραχύς

բարակ ~ λεπτός

երկար-բարակ ~ πολύ, πολύ φλύαρο, πολύ λεπτομερώς

շուր ~ νερό, **գարի** ~ κριθάρι, **գարեշուր** ~ μύρα / ζύθος

Մութը կոխեց: → **Նύχտա**.

մէջտեղ չկայ = ortada yok ~ δεν φαίνεται πουθενά, δεν βρίσκεται πουθενά.

ցատկ, **ցատկել** ~ πηδάω, **ցատկոտել**

բռնել – σφίγγω, αρπάζω

ամբողջ = bütün

Գարուն է: Ամբողջ պարտեզը ծաղիկներով լեցուն է:

վազել, վազվզել, վազվռտել

Ո՛ր կը վազես: այսբան մի՛ վազեր: Անհմաստ է: Ուշացար: Պէտք է ընդունիս:

փախչի - փախայ – փախած եմ – փախեր եմ

Շատեր Սուրիայէն փախած են եւ Երեւան եկած են: Հիմա Երեւան Հայէպցիներով լեցուն է:

Փախստական ըլլալը շատ դժուար վիճակ է: Հայ **փախստական**ները Հայաստանի մէջ չեն ուզեր մնալ: Սուրիա կ' ուզեն վերադառնալ կամ Գանատա արտագաղթել:

կարգը կու գայ – έρχεται η σειρά (του/της)

Ամէն ինչ կարգի՛ն է:

Ինքնաշարժ մը կարգաւորել:

պոռայ – պոռացի – պոռացած եմ – պոռացեր եմ

կանչել – կանչեցի – կանչած եմ – կանչեր եմ

պոռայ-կանչել

կանչել = կոչել

բաւարար

բաւ = բաւական – **Բաւ է:**

բաւել – կը բաւէ': **Ա՛լ կը բաւէ:**

դարձալ – դարձայ, դարձած եմ, դարձեր եմ – **γίνομαι** ή επιστρέφω (*վերադարձնալ*)

Կատուն անպիտան դարձաւ: Նիսյն կը պոռայ եւ կերակուր կը պահանջէ:

դարձնել – դարձուցի, դարձուցած եմ, դարձուցեր եմ – *κάνω κάτι να γίνει κάτι συγκεκριμένο* ή επιστρέφω (ως μεταβατικό ρήμα - *վերադարձնել*)

Կատուն շփացնելով, դուն գայն անպիտան դարձուցի:

մտաւոր ~ στεναχωρημένος

մտաւորել ~ στεναχωρώ

մտաւորուիլ ~ στεναχωριέμαι

միտք ~ πνεύμα / հոգ ~ έγνοια

Հոգ չէ: Հոգ մի՛ ընէր: Merak etme !

Մի՛ մտաւորուիր:

առաւուր, **առտու**

Երբ Երեւան կ' երթաս: *Առտու կանուխ կա՛մ իրիկուն ու առտն:*

ուրիշ = άλλος, εντελώς διαφορετικός

[Բարկացած առտնը] *Այս կատուն աղէւ քե՛ս ուզեր: Ուրիշ կատու մը կ' ուզե՛ս:*

միւս = άλλος σε ένα δεδομένο σύνολο

[Խանութին մէջ] *Այս կատուն չե՛ս ուզեր, միւսը կ' ուզե՛ս:*

շոյել ~ χαϊδεύω, շոյուիլ

շփանալ – շփացայ – շփացած եմ - շփացեր եմ

շփացնել – շփացուցի – շփացուցած եմ – շփացուցեր եմ

երես ~ yüz - **ան**երես ~ yüzüz

մակերեսային ~ yüzeyel, επιόλαιος

մակ- / επι-

առջի օր, **երէկ**, **այսօր**, **վաղը**, **միւս օր**

յաջորդ օրը, անցեալ օրը

հոս ~ μρωδιά, հոս առնել, հոս քաշել



հոսիլ – *Վարդերը ամուշ կը հոսին:*

հոսոսել = հոս առնել, հոս քաշել

Դրացիին **անուշահոտը** գորաւոր է: Ալ միայն սաի **կը հոսոսեմ:** Ինծի գիտուցաւ կը սպառնաք:



*Բիզանդիոն անուշով **անուշահոտը** ի՞նչ **կը հոսի:***

դուռ / (γεν.) դրան ~ θύρα / πόρτα

դրացի ~ γείτονας

նրէն ~ yeniden

մէկէն ~ birden

2. Άρνηση της προστακτικής - Հրամայականի ժխտումը



Όπως στα ελληνικά *μη!* χρησιμοποιείται στα αρμενικά *մի՛*

Η ρηματική μορφή στο δεύτερο ενικό είναι : η ρίζα του ρήματος με το φωνήεν του απαρεμφάτου και την κατάληξη **-ր**.

Η ρηματική μορφή στο δεύτερο πληθυντικό πρόσωπο : η αντίστοιχη μορφή (στο ίδιο πρόσωπο) του ενεστώτα υποτακτικής.

Οι μορφές της άρνησης της προστακτικής είναι πάντα ομαλή, πιο εύκολη από τις μορφές της καταφατικής προστακτικής.

Ρήματα σε **-ել**

մի՛ երազելր

մի՛ երազելք

Ρήματα σε **-իլ**

մի՛ հետեւիլր

մի՛ հետեւիլք

Ρήματα σε **-ալ**

մի՛ ուրանալր

մի՛ ուրանալք

Օրինակներ՝ - Παραδείγματα:

Ա.

Տղաս՝ հիմա **մի՛ երազելր**, պէտք է ինձի մտիկ ընես:

Մամա՝ ինձի այսպէս **մի՛ խօսիր**: Ի՞նչ ըրի քեզի:

Բ.

Մի՛ ուրանալր ներքին իրականութիւնը: Այլապէս պիտի խենթանաս:

Պրն. Ֆրոյտ հետս այսպէս **մի՛ խօսիր**: Արդէն իրականութենէն կը վախնամ:

Գ.

Թուրքիա՝ հայոց ցեղասպանութեան իրականութիւնը **մի՛ ուրանալր**: Այլապէս բնաւ ժողովրդավարական պետութիւն պիտի չըլլաս:

- Հայեր՝ մեզմէ ոչինչ **մի՛ պահանջելք**: Պահանջելու իրաւունքներ չէք ունենար:

Դ.

Ինձի շան պէս **մի՛ հետեւիր**: Չիս ազատ ձգէ՛:

- Լաւ, նկատմամբ չըրի: Այսպէս **մի՛ պոռար**: Կը կարծէի որ դուն ալ միասյին ըլլալ կ' ուզէիր:

Ե.

Միշտ նոր հագուստներ **մի՛ գներ** եթէ դրամ չունենաս:

- Լաւ, արդէն այսքան գիտեմ: Հետս հօրս պէս **մի' վարուիր**:

Բառապաշար՝

Երագել – երագ

Ներքին – **ներքին** գործոց նախարար ≠ **արտաքին** գործոց նախարար

Վախ – վախնալ – վախցնել – վախնալիք

Ժողով – ժողովուրդ – ժողովրդութիւն - ժողովրդավարական

Ծուն > (γεν.) շան

շուն շան որդի

մէկու մը **հետեւիլ** ~ **ακολουθώ κάποιον**

վարել – **վարուիլ** – վարուելակերպ – ինքնաշարժի վարորդ

Է. Գրութիւն – Կείμεնո

Մամլոյ յօդուածի մը սկիզբը, արհիւր՝ http://www.aztagdaily.com/wp-content/uploads/2020/04/APR27_2020.pdf

ՓԱՅԼԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻՆ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՉ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՍԿՍԵԼՈՒ



Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարո Փայլան Հայոց ցեղասպանութեան աղետը ուսումնասիրելու պատասխանատուներն ու ոճրագործները ճշդելու եւ ուշացած արդարութիւնը ապահովելու նպատակով հետաքննութեան սկսելու առաջարկ ներկայացուցած է խորհրդարանի նախագահութեան: «Արմէնփրես» կը հաղորդէ, որ այս մասին ըսուած է երեսփոխանին հրապարակած հաղորդագրութեան մէջ:

Շար.ը՝ էջ 4

Բառապաշար՝

Կոչ ~ κλήση, έκκληση, կոչել
մէկու մը կոչ **ուղղել**
ուղղել ~ απευθύνω

ուղղագրել, ուղղագրութիւն ~ ορθογραφία, ուղղագրական
ուղիղ ~ ευθύς, κατευθείαν

ցեղասպանութիւն

հայոց ցեղասպանութիւն

հայոց եղասպանութեան **մասին** = հայոց եղասպանութեան **շուրջ**

Թուրքիա < (γεν.) Թուրքիոյ ~ η Τουρκία

խորհրդարան ~ κοινοβούλιο

անդամ ~ μέλος

աղէտ ~ καταστροφή / աղէտայիւ ~ καταστροφικός

ուսում ~ μελέτη, σπουδή, , ուսումնասիրել, ուսումնասիրութիւն ~ ερευνά

պատասխանատու ~ υπεύθυνος < պատասխան տալ, պատասխանել ~ δίνω
απάντηση, απαντάω

ոճիւր, ոճրագործ ~ έγκλημα, εγκληματίας

ուշ ~ αργά, ուշանալ ~ αργώ, ուշացնել ~ καθυστερώ

Πολύ άργησε η επίσημη Τουρκία! → Շատ ուշացաւ պաշտօնական Թուրքիան:

ճիշդ ~ σωστός / **ճշդել** ~ ορίζω, ταυτίζω

արդար ~ δίκαιος / արդարութիւն ~ δικαιοσύνη

Օ ւլկեդե ադալետ յօկ. Այն երկիրին մէջ արդարութիւն չկայ:

ապահով ~ ασφαλής / ապահովել, ապահովութիւն ~ ασφάλεια

Թուրքիոյ մէջ հայ ըլլալը ապահով բան չէ:

նպատակ ~ σκοπός / նպատակով ~ με τον σκοπό

Նպատակս աւ է որ ուսանողներս հայերէն, արեւմտահայերէն քիչ մը սորվին եւ արեւմտահայոց պատմութեանը, մշակոյթին եւ ներկայ կեանքի պայմաններուն քիչ մը մտնեն:

առաջարկ, առաջարկել ~ προτείνω

ներկայ ~ παρών, ενεστώτας / ներկայացնել ~ παρουσιάζω

նախագահ ~ πρόεδρος, նախագահութիւն ~ προεδρία

քննել [qinnel] ~ ελέγχω, εξετάζω / **քննութիւն** ~ έλεγχος, εξέταση / **հետաքննութիւն** ~ αστυνομική, δικαστική έρευνα

հաղորդել ~ լուր տալ, ծանուցանել
հաղորդագրել / հաղորդագրութիւն ~ ανακοινωθέν

երեսփոխան ~ խորհրդարանի անդամ

հրապարակ [hirabarag] ~ πλατεία / **հրապարակել**, **հրապարակ հանել** ~ δημοσιεύω, εκδίδω / **հրապարակութիւն** ~ δημοσίευση, έκδοση

շարունակ ~ συνεχής / συνεχώς, **շարունակել** ~ συνεχίζω, **շարունակուիլ** ~ συνεχίζομαι, **շարունակութիւն** ~ συνέχεια

Հարցումներ՝

Ո՞ր գտայ այս գրութիւնը:

Ի՞նչ է գրութեան տեսակը:

Ի՞նչ է գրութեան նիւթը:

Ո՞վ է Կասօն Փայլան:

Ո՞ր կ' ապրի: Ի՞նչն՞ է հոն կ' ապրի:

Ի՞նչ գործ կ' ընէ:

Ի՞նչ է յօդուածին առիթը: